

## ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

### ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԵԱՆ ԴԱՐԸ 20ՐԴ ԴԱՐՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

Հեղինակ՝ Անտրէա Ռիքարտի  
Հրատարակիչ՝ Մօնտատօրի  
Ա. հրատարակութիւն ապրիլ 2000 - Գ հրատարակութիւն Օգոստոս 2000  
էջ՝ 522

Անտրէա Ռիքարտի, ծնած է Հռոմ 1950ին, ժամանակակից պատմութիւն կը դասաւանդէ Հռոմի երրորդ համալսարանին մէջ, հեղինակած է հինգ գիրքեր, նուիրուած ժամանակակից եկեղեցական պատմութեան, յատկապէս կաթողիկէ եւ Միջերկրականի աւազանի ժողովուրդներուն եւ անոնց ընկերական հարցերուն:

Աշխարհահռչակ անուն մըն է 1968էն ի վեր, հիմնած ըլլարով ՍՈՒԻՏԲ էջիտիթի ՀԱՄԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, որուն նախագահէր կը մնայ մինչեւ այսօր:

Քրիստոնեայ եւ ոչ-քրիստոնեայ բոլոր շրջանակները կը ճանչնան զինք, եւ բնականաբար Ս. էջիտիոյի հասարակութիւնը, քանի ամէն տարի միջազգային էկումէնիք հանդիպումներ կը կազմակերպէ, զանազան կեդրոններու մէջ, ուր իրարու կը հանդիպին զանազան ծէսերու պատրիարքներ, խախամներ, մոլլաներ, ծիրանաւորներ, արբաներ, Տալայ-լամա եւ այլն եւ ուր Հայաստանեայց եկեղեցին յաճախ պատույ տեղեր կը գրաւէ իր կաթողիկոսներով, պատրիարքներով, վարդապետներով, շարականներով եւ դպրաց դասերով...:

Հեղինակը կը համարի որ 1900-2000 տարիներու ընթացքին, շուրջ երեք միլիոն նահատակ տուած է քրիստոնեայ աշխարհը, Օսմանեան, համայնավար, հիթլերական, լատին ամե-

րիկեան, իսլամական, Ավրիկեան զանագան վարչակարգերու բռնութիւններու հետեւանքով, եւ այս հասորը -կը գրէ հրատարակիչը՝ անտիպ փաստաթուղթերու առաջին լոյս ընծայումն է, համաշխարհային չափանիշներով<sup>(\*)</sup> որ միաժամանակ լոյս տեսած է Ֆրանսայի, Սպանիոյ եւ շուտով բոլոր միւս գլխաւոր երկիրներու մէջ...:

«20րդ դարու նահատակներ...» ուր յիշատակուած երեք միլիոնէն, առ նուազն երկուքը (գրքախտաբար) հայեր պէտք էին ըլլալ, նկատի առած նաեւ սովետական կարմիր տարիներու 70ամեայ նահատակութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ... եթէ երկու երրորդը հայ էին, ուրեմն հատորին 522 էջերուն նուազագոյն 300 էջերը պէտք էին Հայ Ժողովուրդի Մարտիրոսութեան յատկացուած ըլլալ...:

Այդպէս չէ... դժբախտաբար:

Անտրէա Ռիքարտի շատ կարեւոր անձնաւորութիւն մընէ, գիրքերու հեղինակ, Միջազգային մէծ կազմակերպութեան մը հիմնադիր, համալսարանի փրոֆէսոր, ներկայ ժամանակներու պատմագէտ, Վատիկանի շրջանակներու շատ մօտիկ եւ ազատ մուտք ունեցող... իսկապէս ամօթ, շատ մէծ ամօթ պէտք է զգայ պատմութեան ատեանին առջեւ, որ միայն մէկ փոքրիկ էջ, կը կրկնեմ Մէկ ՓՈՔՐԻԿ իջ յատկացուցած է Մէկ ու կէս միլիոն հայ նահատակներուն, մէկուկէս միլիոն տարագրեալներուն, բռնի իսլամացած մանուկներուն, առեւանգուած կոյսերուն... սովետական կուլակներու մէջ գնդակահարուած հայ եկեղեցականներուն եւ հաւատացեալներուն...<sup>1</sup>:

ՓրոՓ. Ռիքարտի եթէ կարդացած ըլլար (թերեւս կարդացած է) դեռ նոր լոյս տեսած Հ. Ռէէթորի գիրքը, իստալերէն, նոյն ինքն Հոռմի մէջ, ուր իր աչքերէն բան չի կրնար վրիպիւ թերեւս կ'ըսեմ, գուցէ կը սիսալիմ, թերեւս թրքական տեսակէտները չէր որդեգրեր ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ նկատմամբ...

Հայերը բնաջնջուած են որովհետեւ ազդայնական, քաղաքական պայքար մղած են Օսմանեան թուրքիոյ դէմ, ահա-

1. Հեղինակը՝ զգալով հաւանաբար որ քիչ մը «շատ» արագ անցած է հայկական ցեղասպանութեան վրայէն, և էջ մը եւս կը նուիրէ (277-278) Մծրնի եւ Մարտինի քրիստոնեայ մարտիրոսներու, ուր միայն կ'ապրէին կաթողիկէ հայեր, քաղգէցիներէ եւ Ասորիներէ, աղաքագօրէն կոտորուած տեղացի իսլամներէ, յատկապէս քիրատէրէ... Հաւատաքի հերոսական վկայութիւններ անտարկակոյս, որ հայ ժողովուրդի տառապանքի ովկիանոսին մէկ փոքրիկ մասը կը ներկայացնեն... Հագիւ-

բեկչութիւններով, քաղաքային պատերազմներով, եւ այլն եւ այլն... ուստի հարց կու տայ մեծապատիւ փրոֆէսորը - այս ազգայնական պայքարին, որուն զոհ գացին հայերը, կարելի՞ է մարտիրոսութիւն անունը տալ եթէ նոյնիսկ թուրք եւ քիւրտ ամբոխները կրօնական դրդապատճառներով կոտորեցին եւ բնաջնջեցին հայութիւնը իր հողերուն վրայէն...

Յարդելի փրոֆէսորը երանի այդ մէկ էջն ալ զանց ընէր եւ զրադէր Ուժրանիայի ունիաթներով եւ Թիմորի իր հաւատացեալներով եւ Քէնիայի ու Պուլունատիյի միսիոնարներուն կրած հալածանքներով եւ նահատակութեամբ, կամ ալ այդ Մէկ էջլ մրոտելէ առաջ, հաճէր կարդալ 1800ի առաջին տասնամեակներէն սկսած Հայոց Պատրիարքարանի աղերսագիրները Բ. Դուռին, ուր յեղափոխական կոչուած կուսակցութիւններու գոյութենէն դար մը առաջ, երբ ինքնավարութեան իսկ փափաք ունենալն մահապատիժի համազօր էր, եկեղեցական բարձրագոյն իշխանութիւնները պաղատագին գրութիւններով սուլթանին միջամտութիւնը կը հայցէին որ քրիստոնեայ հայ չհալածուի իր հաւատքին համար...:

Այսպէս ուրեմն, կարելի՞ է 20րդ դարու մարտիրոսներու մասին 522 էջնոց հատոր մը լեցնել, Մէկ ՓՈՔԻՒԿ էջ նուիրելով 20րդ դարու Ամենամեծ ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒԹԻՒՆ...

Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ. ՊԶՏԻԿԵՍ.Ն